

Արտասահմանի մէջ քննութիւն մը կը կատարուի՝ ստուգելու համար պաշտօնեաներուն ըսածը:

Ու կը հաստատուի: Այո՛, Պոլսահայերը շորթած էին թրքական հայիոյութեանց հատընտիր հաւաքածոն, տարիներով արտածում կատարած, իրենց գացած տեղերը չարաչար գործածած այդ լուտանքները եւ մինչեւ անգամ օտարներուն գործածել տուած:

*

Պոլսեցիներ, Վոսփորի եզերքը ծնած ըլլալով, շատ կը սիրէ նեղուցը, ինք ալ արդէն նեղուց մըն է, որ իրարմէ կը բաժնէ կնիկը եւ երիկը ու իրար կը միացնէ շատակերութիւնը եւ շատախօսութիւնը:

*

Եթէ արձանագործ ըլլայի, պիտի շինէի Պոլսեցիներ արձանը հետեւեալ ձեւով.

Պատուանդան մը, որ պիտի ներկայացնէր Վլանկայի վարունգի արտը: Անոր մէջ կանգնած Պոլսեցիներ: Արձանները մերկ կը շինեն ընդհանրապէս: Իմ քանդակելիք Պոլսեցիս, թէեւ Ադամի մը պիտի նմանէր իր բոպիկութեամբ եւ մերկանդամութեամբ, սակայն, հագած պիտի ըլլար վարտիք, շապիկ մը կամ գիշերանոց մը:

Վերամբարձ աջ ձեռքին մէջ պիտի ունենար բոցավառ եւ ջահաձեւ օղիի շիշ մը:

Ձախ ձեռքին մէջ անմահութեան բաժակը:

Պոլսեցիներ իր կռակը դարձուցած պիտի ըլլար Արեւելքին... յանուն յառաջդիմութեան:

Բերանը բաց ու պռռալու ձեւ մը պիտի ունենար: Իր աղաղակէն ուզողը իր ուզածը կրնայ հասկնալ. օրինակ՝

-Յրդէ՛հ կայ...

-Կեցցէ՛ բլբուլ գետի քաջ խումբը...

-Մուխը կը մարենք այրողներուն...

-Անկցի՛ն գինետունին ապակիները...